

№ 3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՆԱԳՈՒԹԻՒՆ
КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ АРМЕНИИ № 3

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք!


Ա. ԼԵՆԻՆ

ԹԵԶԻՍՆԵՐ

ԲՈՒՐՋՈՒԱԿԱՆ ԵՒ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ

ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Н. Ленин—„Тезисы о буржуазной и пролетарской демократии“.



10 SEP 2013

24 MAY 2005

03 NOV 2009

№ 3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 3

3K23 03

5-38

Ն. ԲԵՆԻ

Խ.

300

1310-66

Թ. ԵԶԻՍԱՐԵՐ

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք!



ԲՈՒՐՋՈՒԱԿԱՆ ԵՒ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ

ԳԵՂԱԿԱՏԻՎ ՄԱՍԻՆ

Հ
Յ
Շ
Ո
Շ
Ո
Շ

(Н. Ленин—„Тезисы о буржуазной и пролетарской демократии“).



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՄՈՅԱՀԱ—1919.

1) Պրոլետարիատի յեղափօխական շաբժման աճումը բոլորի կողման առաջ է բերել բուրժուազիալի ու բանուրական կազմակերպութեանց մէջ նրա գործակալների աճնեցու երկունք՝ դադափարական-քաղաքական առարկութիւններ գտնել հարստահարիչների տիրապետութիւնը պաշտպանելու համար։ Այդ առարկութեանց մէջ առանձնապես դիկտատուրայի դատապարտութիւնը և դեմոկրատիալի պաշտպանութիւնն է առաջ բերում։ Սառութիւնն ու կեղծութիւնն այդպիսի մի առարկութեան, որ հազար եղանակով կրկնում է կապիտալիստական մամուլի և Դեղին Խոսերնացիոնալի համաժողովում, 1919 թ. վետրարին թեռնում, ակներև են բոլորի համար, ով չի կամենում զաւածանել սոցիալիզմի հիմնական սկզբունքներին։

2) Աճենից առաջ այդ առարկութիւնն առաջ է բերում «դեմոկրատիա՝ ընդհանրապէս» և «դիկտատուրա՝ ընդհանրապէս» հասկացողութիւնները, առանց հարց տալու այն մասին, թէ ո՞ր գասակարգին է վերաբերում խօսքը։ Խոնդը այդպիսի արագածակարգալին կամ զերագասակարգալին, իբր թէ համաժողովրդական՝ առաջադրութիւնն ուղակի մի ժաղը է սոցիալիզմի հիմնական ուսուցման՝ դասակարգալին պալքարի ուսուցման՝ դէմ, որ բուրժուա-

զիափի կողմն անցած սոցիալիստներն ընդունում են խօսքով և մռամբում գործով։ Քանի որ ոչ մի բազաքահիրթ, կապիտալիստական երկրում զոյութիւն չունի «գեմոկրատիա՝ ընդհանրապէս», այլ զոյութիւն ունի միան բուր հուական գեմոկրատիա, և խօսքը ոչ թէ «գիշտատուրալի» մասին է «ընդհանրապէս», այլ ճնշած դասակարգի գիշտատուրալի, այսինքն պրոլետարիատի՝ ճնշողների և հարստահարողների, այսինքն բուրժուազիայի, հանդեպ, իրանց տիրապետութեան համար մեռող պայքարում հարստահարողների ցուց աւած դիմադրութիւնը յաղթահարելու համար։

3) Պատմութիւնն ուսուցանում է, որ ոչ մի ճնշած դասակարգ երբէք տիրապետութեան չի հասել և չէր կարող տիրապետութեան համեմ չվերտպելով գիշտատուրալի շըրջանը, այսինքն՝ քսդաքական իշխանութեան նւարեմնն և հարստահարողների միշտ ցուց աւած ամենից կատաղի, ոչ մի ոճի առաջ կանգ չառնող դիմադրութիւնը բանութեանը ճնշելու շրջանը։ Բուրժուազիան, որի տիրապետութիւնն են պաշտպանում այժմ արնդհանրապէս գիշտատուրալի» դէմ խօսող և «ընդհանրապէս գեմոկրատիալի» համար խաչ բարձրացող սոցիալիստները, առաջաւոր երկրներում նւանել է Եշխանութիւնը մի շարք աղաւութիւնների, քաղաքացիական պատերազմների, թագաւորների, ֆէոդալների, ստրիտէրների և ուստաիրացիալի նպատակով նրանց արած փորձերի բանի ճնշման գնով։ Հաղարաւոր և միլիոնաւոր անդամ բոլոր երկրների սոցիալիստներն իրանց գրքերում, բբոշիւրներում, իրանց համագումարների ուղղվից յիշաներում, իրանց ազիտատորական նառերում պարզել են ժողովրդին բուրժուական այդ լեղափոխութեանց, բուրժուական այդ գիշտատուրալի դասակարգակին բնույթը։ Ուստի և «ընդհանրապէս գեմոկրատիալի» մասին փաստաբաններով՝ բուրժուական գեմոկրատիալի ներկայ պաշտպանութիւնը և «ընդհանրապէս գեմոկրատիալի» դէմ բղաւելով՝ պրոլետարիատի գիշտատուրալի դէմ ներկայ

գոռոցն ու աղաղակը սոցիալիզմի ուղղակի գաւաճանութիւն է, փառտապէս բուրժուազիայի կողմն անցնելու նշան, սեփական, պրոլետարական լեղափոխութեան վերաբերութեամբ պրոլետարիատի իրաւունքի բացասում, բուրժուական ու թորմիզմի պաշապանութիւն հէնց այն պատմական վայրկեանին, երբ բուրժուական ու թորմիզմի կրախ է կրել ամրող աշխարհում և երբ պատերազմը լեղափոխական դրութիւն է ստեղծել։

4) Բոլոր սոցիալիստները, պարզաբանելով բուրժուական քաղաքակրթութեան, բուրժուական գեմոկրատիալի, բուրժուական պարլամենտների դասակարգավիճն բնույթը, այն միաբն էին լայտներ, որ զիտական ամենամեծ ճշգրտութեամբ արտայացուել էր Մարքսի և Էնգելսի խօսքերով, թէ բուրժուական ամենալեճոկրատիկ հանրատակետութիւնն այլ ինչ չի, քան բանւոր դասակարգը բուրժուազիալի, աշխատաւոր մասաւանները մի բաւան կապիտալիստների միշտով ճնշելու մեջենար, Դիկտատուրալի գէմ և յօդուտ զեմոկրատիալի ներկայութեամս աղաղափողների մէջ չկայ ոչ մի լեղափոխական, ոչ մի մարքսիստ, որ բանւորների առջև երդւած զիներ ասուածների անունով, թէ, ինքն ընկունում է սոցիալիզմի այդ հիմնական հշմարտութիւնը. իսկ այժմ, երբ, ձատելով Փշըել նընշումի այդ մեքենան ու նւանել պրոլետարիատի զիշտատուրան, յուղուում է և շարժուում լեղափոխական պրոլետացիատը՝ սոցիալիզմի այդ զաւանանները բանն այնպէս են ներկայացնում, թէ իբր բուրժուազիան աշխատաւորներին ազւացեալիքատիա է շնորհել իբր բուրժուազիան հրաժարւել է զիշտագրութիւնից և պատրաստ է ենթարկւել աշխատաւորների մեծամասնութեանը. իբր զեմոկրատական հանրապետութեան մէջ չի եղել և չկայ ոչ մի պետական մեքենայ՝ աշխատանքը կապիտալի միշտով ճնշելու համար։

5) Պարիզի Կոմմաւնան, որին խօսքով փառաբանում են բոլորը նրանք, ովքեր կամենում են սոցիալիստ համարել, քանի

որ գիտեն, որ բանւորական մասսաները շերմօրէն և անեղծօրէն կարեկցում են նրան, առանձին տկնրախութեամբ ցոյց տւեց միջնադարի համեմատութեամբ վերին աստիճան պրոդուցիվ, բայց պրոլետարական լեզափոխութեան շրջանում անրեսսիվ, բայց պրոլետարական լեզափոխութիւն պահանջող հիմնուաթիւլիօրէն արմատական փոփոխութիւն պահանջող հիմնարկութեանց՝ բուրժուական պարլամենտարիզմի և բուրժուական դեմոկրատիալի պատմական պայմանականութիւնն ու սահմանափակ արժեքը: Մարքսն ինքը, որ ամենից լաւ էր գնահատել Կոմմունալի պատմական նշանակութիւնը, վերը ծերով այն, ցոյց է տւել հարստահարող բնութը բուրժուական դեմոկրատիալի և բուրժուական պարլամենտարիզմի, երբ ճնշաղ դասակարգերը մի քանի տարին մի անդամ իրաւունք են ստանում վճռելու, թէ ունենոր դասակարգերի ո՛ր ներկացուցիչը պիտի աներկայացնի և ոտի տակ առյա (ver-und zertreten) ժողովուրժը պարլամենտում: Հենց այժմ, երբ խորհրդական շարժումը, ընդգրկելով ամեողջ աշխարհը, ամենըն հրդային շարժումը, ընդգրկելով ամեողջ աշխարհը, ամենըն հրամար ակներև կերպով Կոմմունալի դործն է շարունակում, սոցիալիզմին գաւանանողները, կրկնելով բուրժուական հին խլանն «ընդհանրապէս դեմոկրատիալի» մասին, մոռանում են Պարիզի Կոմմունալի կոնկրետ փորձերն ու կոնկրետ դասերը: Կոմմունան պարլամենտական հիմնորկութիւն չի:

6) Ապա Կոմմունալի նշանակութիւնը նրանումն է, որ նա փորձ է արել փշրել, հիմնակատակ անել բուրժուական պետական մեքենան, չինսվենիկական, դատաստանական, դինուական, ոստիկանական ապարատը, փոխարինելով բանւորական, ոստիկանական ապարատը մասսայական այն կազմակերպութեամբ, որ օրէնսդիր և դորձադիր մարմինների բաժանում չի ճանաչում: Ժամանակակից բոլոր բուրժուական-դեմոկրատական հանրապետութիւնները, դրանց թւում նաև գերմանականը, որ սոցիալիզմի գաւանանները, ժաղըի ենթարկելով նշարտութիւնը, պրոլետարական են անւանում, պահպանում են պետական այդ ապարատը: Այդպիսով, նորից և նորից

միանգամայն ակներև կերպով հաստատում է փաստը, որ ի պաշտպանութիւն Արնդհանրապէս դեմոկրատիալի» բարձրացած տղաղակներն իրապէս բացայալուում են որպէս պաշտպանութիւն բուրժուաղիալի և նրա հարստահարողական արտօնութեանց:

7) «Ժողովների ազատութիւնը» կարող է «զուտ գենկրատիալի» օրինակ համարւել: Իւրաքանչիւր գիտակից բանւոր, որ չի խզել իր կապերը սեփական դասակարգի հետ, ինասկանայ իսկոյն և եթ, որ անմտութիւն է ժողովների ազատութիւն խոստանալ հարստահարողներին՝ այն ժամանակաշրջանում և այն պարագաներում, երբ հարստահարողները ներկայում են իրանց տապալմանը և պաշտպանում իրանց արտօնութիւնները: Բուրժուաղիան, երբ նա լեզափոխական էր, ո՛չ Անդիիայում 1649 թւին, ո՛չ Ֆրանսիայում 1789 թւին, «Ժողովների ազատութիւն» չի տւել մանարխիուններին և աղնաւականներին, որոնք արտասահմաննեան զօրքեր էին ներս հրաւիրում և «Ժողովում» ուեստավրացիալի փորձեր կաղմակերպելու: Եթէ ներկայիս, վաղուց ոչակցիօն դարձած, բուժուաղիան պահանջում է պրոլետարիատից՝ պահանովելու հարստահարողներին «Ժողովների ազատութիւն», առանց ի նկատի առնելու, թէ ի՞նչ գիմաղը թիւն են ցոյց տալու նրան կապիտալիստները, այդ գեպքում բանւորները միայն պիտի ծիծաղեն բուրժուաղիալի երեսպաշտութեան վրայ:

Միւս կողմից, բանւորները շատ լաւ դիտեն, որ «Ժողովների ազատութիւնը» նոյնիսկ ամենաղենմոկրատիկ բուրժուական հանրապետութեան մէջ սին ֆրաղ է, որովհետեւ հարութաններն իրանց արամաղը թիւն բոլոր լաւագոյն հաստարակական մասնաւոր շինութիւնները, այլև բաւականաչափ ազատ ժամանակ ժողովների համար ու գրանց պաշտպանութիւնն իշխանութեան բուրժուական ապարատի միջոցով: Քաղաքի և գիւղի պրոլետարները և մանր գիւ-

զայիները, աշխանքն՝ աղքաբնակչութեան հսկակական մեծամասնութիւնը, չունեն, ոչ մէկը, ոչ միւսը, ոչ երբորդը։ Քանի դեռ բանն արագէտ է, «հաւասարութիւնը», այսինքն՝ «զուագեմոկրատիան», խարերացութիւն է։ Խսկական հաւասարութիւն նուանելու համար, աշխատաւորների համար գենոկրատիան դործով իրականացնելու համար, հարկաւոր է հարստահարիներից խել նախ բոլոր հասարակական և փառաշեղ մասնաւոր շինութիւնները, հարկաւոր է նախ ազատ ժամանակ տալ աշխատաւորներին, հարկաւոր է, որ նրանց ժողովների ազատութիւնը զինւած բանւորները պաշտպանեն, և ոչ մանր ազնւականները կամ կապիտալիստ - օֆիցերները խել ու կրակ զինւորների հետ ի միամին։ Միայն այսպիսի փոփոխութիւնից ինտոյ է կարելի, առանց բանւորներին, աշխատաւորներին, աղքաններին ծաղրի ենթարկելու, խօսել յաղովների ազատութեան, հաւասարութեան մասին։ Խսկապիսի փոփոխութիւն առաջ բերել չի կարող ոչ ոք, բայց աշխատաւորների աւանդարդից՝ պրոլետարիատից, որ տապալում է հարստահարիներին՝ բուրժուազիալին։

8) «Մամուլի ազատութիւնը» նոյնպէս «զուագեմոկրատիաի» գլխաւոր լրգունդներից մէկն է։ Դարձեալ բանւորներն են որ գիտեն և բոլոր երկրների սոցիալիստները միլիոն անգամ խոստովանել են, որ այդ ազատութիւնը խորհութիւն է, քանի գեռ լաւագոյն տպարանները և թղթի խոշորագոյն պահեստները զրաւած են կապիտալիստներից, և քանի դեռ նամուլի վրայ ժանրանում է կապիտալի իշխանութիւնը, որ ամբողջ աշխարհում այնքան աւելի պայծառ, աւելի կարուկ, աւելի ցինիկ կերպով է զրսեարւում, որքան աւելի զարգացած են գենոկրատիզմն ու հանքապետական կազմը, ինչպէս, օրինակ, Ամերիկայում։ Որպէս զի աշխատաւորների, բանւորների և զիւղացիների համար իսկական գենոկրատիա նւաճելի, հարկաւոր է նախ խել դարձեալ կապիտալիստներից զրադներ վարձից առաջ աւելի մէկը կապիտալիստների լուծարութիւնը՝ մեռնելու քաղցից։ Կապիտալիստները մամուլի ազատութիւնը են կուռմ մամուլը կաշուելու ազատութիւնը հարուստների համար, հարստութիւնն այսպէս կոչւած հանրապին կարծիքի չերիւրման և պաշտպանութեան համար օդագործելու ազատութիւնը։ («Զուտ գենոկրատիալ») ազատութեան պաշտպաններն իրօք դարձեալ մասսաների լուսաւորութեան միջոցների վրայ հարուստների ավրագիտութեան ամենից կեղաղդ, զանառի սիստեմի պաշտպաններ են գուրս գալիս, ժողովուրդը խարխարդներ են գուրս զալիս, որոնք բարեակս, զեղեցիկ և լիովին կեղծ ֆրազներով շեղում են նրա ուշադրութիւնը մամուլը կապիտալին ստրկանալուց ազատագրելու կոնկրետ պատմական նպատակից։ Իրական ազատութիւն և հաւասարութիւն կինի այն կարգը, որ ստեղծում են կոմմանիստները, որտեղ հսարաւոր չի լինի հարստանալ ուրիշի հաշվին, առարկայական հսարաւորութիւն չի լինի, ոչ ուղղակի և ոչ անող զակի ենթարկել մամուլ փողի ավրագետութեանը, արգելը չի լինի, որ իւրաքանչիւր աշխատաւոր (կամ աշխատաւորների որքան կուզե բազմաքանակ իւրաքանչուր մի խումբ) ունենայ և իրազործի հաւասար իրաւունք՝ օգտագործելու հասարակական տալարաններ և հասարակական թուղթ։

9) XIX և XX դարերի պատմութիւնը դեռ պատերազմից առաջ է ցուց աւելի թէ ի՞նչ բան է այսպէս կոչւած ազատ գենոկրատիզմն» կապիտալիզմի ժամանակ։ Մարքսիստները միշտ են ասել, թէ որքան աւելի զարգացած, որքան աւելի պատացած» է գենոկրատիզմն, նոյնքան աւելի բացալայտ, խիստ, անգութ է զասակարգալին պարարը, նոյնքան

աւելի «զտացած» են հանդէս գալիս—կապիտալի լուծն ու բուրժուազիալի դիկտատուրան։ Դրայֆուսի գործը հանրապետական Ֆրանսիայում, կապիտալիստների զինած վարձկան գործառների վայրագութիւնները գործադուլաւորների վերաբերմամբ Ամերիկայի աղատ և դեմոկրատիկ հանրապետութեան մէջ,—այս ու հազար նման փաստեր այն նշմարտութիւնն են ցոյց տալիս, որ իզուր փորձում է ծածկել բուրժուազիան, այսինքն, որ ամենադեմոկրատիկ երկներում հանրապետութեանց մէջ գործնականապէս իշխում են աերրորն ու բուրժուազիալի դիկտատուրան, որ արտադրութեան իւրաքանչիւր անդամ, երբ հարստանարոդներին սկսում է թւալ, թէ կապիտալի իշխանութիւնը տատանում է։

10) 1917—1918 թ.թ. իմպերիալիստական պատերազմը վերջականապէս բացալայաց, նոյնիսկ յետամաց բանւորների առջև, բուրժուական դեմոկրատիալի այս խկական բնորդն անդամ ամենից աղատ հանրապետութեանց մէջ։ Դերմանտկան կոմ անդիմական միլիոննատէրերին կամ միլիորդտաէրերին հարստացնելու համար տասնեակ միլիոննաւոր մարդ կրտորեցին, և ամենից աղատ հանրապետութեանց մէջ հաստատեց բուրժուազի զինւորական դիկտատուրան։ Զինւորական այս դիկտատուրան, Դերմանիան կործանելուց յետոյ իսկ, շարունակում է չամաձայնութեան երկներում։ Հենց պատերազմն է, որ ամենից լայն բացեց աշխատաւորների աչքերը, խլեց բուրժուական դեմոկրատիալից կեղծ ծաղիկները, ցոյց տւեց ժողովրդին պատերազմի ժամանակ և պաները, ցոյց տւեց ժողովրդին պատերազմի ժամանակ և պատերազմի առթիւ եղած սպեկուլէացիալի և շահեցման անդունդը։ Բուրժուազիան վարեց այս պատերազմը յանուն ազտութեան և հաւասարութեան, յանուն ազտառութեան և հաւասարութեան անլուր հարստացան զինւորական կապարուները։ Բեռնի Դեղին ինտերնացիոնալի և ոչ մի զանքը չի կարող թաղցնել մտսաներից այժմ մինչև վերջը մերկացրւած բուրժուական աղատութեան, բուրժուական հաւասարու-

թեան, բուրժուական դեմոկրատիալի հարստանարողական բնովթը։

11) Եւրոպական ցամաքի ամենից զարգացած կապիտալիստական երկրում, Գերմանիայում, իմպերիալիստական Գերմանիալի կործանումով ձեռք բերած լիտակատար ազատութեան առաջին իսկ ամենները ցոյց տւին գերմանական բանւորներին և ամբողջ աշխարհին, թէ ինչնումն է բուրժուական դեմոկրատական հանրապետութեան իսկական դաստիարակինների էութիւնը։ Կարլ Լիրկնեխտի և Ռողա Լիւբումբորդի սպանութիւնը համաշխարհային—պատմական կարերութիւն ունեցող մի անցք է, ոչ ծիածն այն պատճառով, որ արագիկօրէն ընկան իսկական պրոլետարական, կոմմունիստական ինտերնացիոնալի լուագոյն մարդիկն ու առաջնորդները, այլև այն պատճառով, որ առաջաւոր եւրոպական կարելի է առանց չափազանցութեան ասել՝ համաշխարհային մասշտաբով առաջաւոր—պետութեան համար մինչև վերջը բացալայուց նրա դաստիարակինների էութիւնը։ Եթէ վերջը բացալայուց նրա դաստիարակինների առաջապահութեան տակ առնւած մարդիկ անպատիժ սպանել կարող էին օֆիցերների և կապիտալիստների ձեռքից սոցիալ-պատրիոտների, կառավարութեան ժամանակ, նշանակում է, դեմոկրատիկ հանրապետութիւնը, որտեղ այդ բանը հնարաւոր էր, բուրժուազիալի դիկտատուրա է։ Մարդիկ, որոնք իրանց զայրովթն են յաշտառում կարլ Լիրկնեխտի և Ռողա Լիւբումբորդի մահւան առիթով, բայց չեն հասկանում այս նշմարատութիւնը, կամ իրանց երեսպաշտութիւնը։ Անզատութիւնն աշխարհիս ամենից աղատ և առաջաւոր հանրապետութիւններից մէկում, գերմանական հանրապետութեան մէջ, պրոլետարիատի բանդարկւած տռաջնորդներին անպատիժ սպանելու աղատութիւնն է։ Եւ սա չի կարող ուրիշ կերպ լինել, քանի գեռ պահուում է կապիտալիզմը,

կարող լինել՝ բայցի բուրժուազիալի դիկտատուրալից կամ՝ պրոլետարիատի գիշտատուրալից: Արևէ երրորդ բանի մասին եղած բոլոր պատրանքները՝ մանր բուրժուազիալի ռեակցիօն վայնասուններ են: Այդ են վիալում և՝ բուրժուական դեմոկրատիալի ու բանուորական շարժման աւելի քան բաղմանայ զարգացման փորձը, և՝ մանաւանդ վերջին հնդամեակի փորձը: Դրա մասին են խօսում նաև գիտական քաղաքա- տնակառութիւր, մարքսիզմի ամբողջ բովանդակութիւնը, որ իւրաքանչիւր ապրանքալին անտեսութեան ժամանակական անխուսական անփառմանը մեջում, նվեցարիալում, ապա՝ հակարողների կական պայմաններ Անդրիկայում և այնու Հնդհանրապէս գեմ միրատիալի կամ զուտ գեմտկրատիալի տեսակետից ուղղակի ժիշտադղելի է, որ առաջապահ քաղաքակիրթ, գենոկրատիկ, մինչ առանձները զինւած երկիրները վախենում են մի քանի տասնեակ մարդկանց ներկարութիւնից, լեամնաց, քաղցած, աւերւած նրանասանից, որին բուրժուական լրագիրները առածեակ միլիոնաւոր օրինակներում վայրագ, ոճրագործ և այլ անունն են տալիս: Պարզ է, որ այդպիսի աղաղակող հակառութիւն առաջացնող հասարակական կացութիւնն իրոք բուրժուազիալի զիշտատուրա է:

12) Իրերի այս գրութեան հանդէա՝ պրոլետարիատի զիշտատուրան ոչ միայն օրինաւոր է, որպէս հարստահարողների տապալում և նրանց գիմալրութեան նեշում, այլև բացարձակ անհրաժեշտ է աշխատաւորների ամբողջ մասսայի համար, որպէս միակ պաշտպանութիւն բուրժուական դիկտատուրալի դեմ, որ պատերազմ առաջացրեց և պատրաստում է նոր պատերազմ:

Այն զիշտատուրը, որ չեն հասկանում սոցիալիստները, և որ կազմում է նրանց տեսական կարճատեսութիւնը, նրանց գերւածութիւնը բուրժուական նախապաշարութեանը և նրանց քաղաքական գաւանանութիւնը պրոլետարիատի վերաբերմար, դա այն է, որ կտպիտալիստական հասարակութեան մէջ, նրա հիմքում զրւած գասակարդալին պալքարի քիչ թէ շատ լուրջ սրման դէպում, ոչինչ միշին բան չի

13) Սոցիալիստների մի ուրիշ տեսական և քաղաքական սխալը նրանումն է, որ չեն բմբռնում, թէ իր հասպարեան սազմնաւորութիւնից սկսած գենոկրատիալի ձևերը ժամանակի լնթացքում անխուսակելիորէն փոխւել են, մի գառակարգի ակրապետութիւնը միւսով փոխրինւելուն համընթաց:

Յունաստանի հին հանրապետութեանց մէջ, միշնադարեան բազարներում, առաջաւոր կապիտալիստական երկիրներում գենոկրատիան տարբեր ձևեր ունի և կիրառման տարբեր աստիճանն: Մեծագոյն անհեթեթութիւնը կինէր կարծել, թէ մարդկութեան պատմութեան մէջ ամենախոր լեզափոխութիւնը, իշխանութեան անդրանիկ փոխանցումը հարստահարիների փոքրամասնութիւնից հարստահարւողների մեծամանութեանը կարող է տեղի ունենալ հին բուրժուական, պարլամենտական գենոկրատիալի հին շրջանների ներսում, կարող է տեղի ունենալ առանց խոշորագոյն տակնութիւնումի, առանց գենոկրատիալի նոր ձևերի, նոր հիմնարկութեանց ստեղծագործութեան, որուց մէջ կմարմնաորուեին նրա կիրառման նոր ձևերը:

14) Պրոլետարիատի զիկատուրան նրանով է նման
ուրիշ դասակարգերի զիկատուրալին, որ նա ինչպէս և ամեն
ծի ուրիշ զիկատուրայ, առաջ է եկել քաղաքական տիրա-
պետութիւնը կորցնող դասակարգի բռնի զիմաղրութիւնը
ևնշելու անհրաժեշտութիւնից; Պրոլետարիատի զիկատու-
րալի արմատական տարրերութիւնը ուրիշ դասակարգերի
զիկատուրալից,—կալածատէրերի զիկատուրալից միշին
դարերում, բուրժուազիալի զիկատուրալից բոլոր քաղաքա-
կիրթ, կապիտալիստական երկրներում,—Նըս մէջն է, որ կալ-
ածատէրերի և բուրժուազիալի զիկատուրան ազգաբնակ-
չութեան ահազին մեծամասնութեան, այսինքն աշխատաւոր-
ների զիմաղրութեան բռնի ճնշումն էր: Ըսդհակառակը, պըո-
ւետարիատի զիկատուրան հարստահարիչների, այսինքն աղ-
գարնակչութեան չնչին փոքրամասնութեան, կալածատէրերի
և կապիտալիստների զիմաղրութեան բռնի ճնշումն է:

Սրանից, իր հերթին, հետեւում է, որ պղողետարիատը դիկտատուրան իր հերթին անխօռասափելիորէն ոչ միայն ընդ-հանրապետ դեմոկրատական ձեւը ու հրմանքութեանց փոփոխութիւնն է առաջ բերում, այլ և խաղապետ նրանց այն-պիսի մի փոփոխութիւնն, որ առաջացնում է աշխարհումս գեռ չտեսնեած չափերով և ընդլայնում գեմակրատիզմի փառ-տական օգտագործումք կապիտալիզմից ճնշւած աշխատաւոր գասակարգերի կողմից:

գասազարդութիւն կազմութիւն է առ իր պատճենաբարիատի ղիկոսատուրալի ան ձեր, որ փաստօրէն արդէն մշակւած է, այսինքն Խորհրդալին իշխանութիւնը Առ ասստանում, Räte-System-ը Գերմանիակում, schop stewards committees և խորհրդալին ուրիշ նման հիմնարկութիւններ ուրիշ երկրներում, զրանք բոլորն աշխատաւոր դասակարգերի, այսինքն ազգարնակչութեան ահազին մեծամասնութեան համար դեմոկրատական իրաւունքներից և ազատութիւններից օգտվելու ախպիսի փաստական հարաւորութիւն են նշանակում ու իրազորժում, որպիսին երեք

շի Եղել անդամ ճօտաւոր չափով, նոյնիսկ ամենալաւ գեծո-
կրատական բուրժուական հանրապետութեանց մէջ:

15) Քաղաքացիների սեռից, կրօնից, ռասավից, ազգութիւնից անկախ այն հուսափութիւնը, որ բուրժուական դեմոկրատիան խոստացել է միշտ և ամենուրեք, բայց երբեք զլուխ չի բերել և չնորհիւ կապիտալիզմի ախրապետութեան չեր կարող զլուխ բերել, Խորհրդացին Խշանութիւնը կամ պրոլետարիատի գիշտատուրան իքաղործում է միանդամից և լիովին, քանի որ այդ կարող է անել միայն արտադրութեան միջոցների ձամնաւոր սեփականութեամբ չշահազրդուած և նրանց բաժննման ու վերաբաշխման համար պայքարող բան. և օրների իշխանութիւնը:

16) Հին, այսինքն բութքուական գետպղաւուր և համենաարիցն այնպէս էին կազմակերպւած, որ հենց աշխատաւոր ժամանելըն ամենից շատ էին հեռու մնում կառավարաւոր ժամանելըն ամենից շատ էին հեռու մնում կառավարիցն իշխանութիւնը, այսինքն պրոլետարիատի դիկտատուրան, ընդհակառակն, այնպէս

Է հիմնած, որ աշխատաւորների մասսաները մօտեցւեն կառավարութեան ապագարատին: Նոյն իսկ նպատակին ևն ծառայուժ օրէնսդիր և գործազիր իշխանութեանց միացումը պետութեան Խորհրդացին կազմակերպութեան մէջ և տերրիտորիալ բնարական շրջանների փոխարքնութիւն արտադրական միաւ որներսի, ինչպէս՝ գործարան, ֆարբիկ:

17) Զօրքը ճնշման ապագաբառ է, եղել ոչ միայն միապետութեան ժամանակի: Նա մնաց նոյնը նաև բոլոր բուրժուական, անդամ ամենից դեմոկրատիկ հանրապետութեանց մէջ: Միայն Խորհրդային Դշմանութիւնն է, որ ինչպէս կապիտալիզմից ճնշւած դատակարգերի իսկ մշասկան պետական կազմակերպութիւնն, կարող է ոչնչացնել զօրքի հպատակութիւնը բուրժուական հրամանատարութեան և իրօք ձուլել պրոլետարիատը զօրքի հետ, իսկապէս իրազորմել պրոլետարիատի դինումը և բուրժուագիւալի դինաթափումը, առանց որի անհնարին է սոցիալիզմի լաղթանակը:

18) Պետութեան Խորհրդակին կազմակերպութիւնը համակերպւած է այն ղեկատիքը գերին, որ վերապահւած է պրոցեսարիտատին, որպէս մի դասակարգի, որ կապիտալիզմի շնորհիւ ամենից կենորունացածն է և լուսաւարւածք: Ճեշւած դասակարգերի բոլոր լեզափոխութեանց ու բոլոր շարժումների վիճակը, համաշխարհակին սոցիալիստական շարժման փորձը, ռւսուցանում է մեզ, որ միայն պրոլետարիատն է կարող միացնել և անել իւր լետեից աշխատաւոր և շահագործւող ազգարնակչութեան ցրւած և լետանաց խուերը:

19) Միայն պետութեան Խորհրդային կազմակերպութիւնն է կարող իրավել միանգամայն և կործանել վերջնականապէս հին, այսինք բուրժուական, չինովնիկական, գաղտաստանական ազգաբարատը, որ կապիտալիզմի ժամանակ պահւել է և անխուսափելիօրէն պէտք է պահւեր նոյնիսկ ամենապեմոկրատիկ հանրապետութեանց մէջ, փաստապէս ամենամեծ արուելը հանդիսանալով դեմոկրատիզմը բանուորների

և աշխատաւորների համար կենսագործելուն։ Պարիզի Կոմմունան այդ ուղղութեամբ առաջին ընդհանուր բ-պատմական քայլն արեց, Խորչը պային իշխանութիւնը՝ երկրորդը։

20) Պետական իշխանութեան ոչնչացումն այն նպատակն է, որ առաջադրել են իրանց բոլոր սոցիալիստները, Մարքսը դրանց թւում և գրանց առաջին տեղը: Առանց այդ նպատակի իրադրութման՝ իսկական գենոկրատիզմը, այսինքն հաւասարութիւնն ու ազատութիւնը, անիրազործելի են: Իսկ զեպի այդ նպատակը գործնականապէս տանում է միան խորհրդավին կամ պրոլետարական գենոկրատիան, քանի որ աշխատաւորների մասսայական կազմակերպութիւնները պետական կառավարութեան իսկական և անհրաժեշտ մասնակցութեան կոչելով՝ նա սկսում է անմիջապէս նախապատրաստել ամեն մի պետութեան լիակատար չքացումը:

21) Բեռնում համախմբւած սոցիալիստաների լիակատար սնանկութիւնը, նրանց լիակատար անօգութիւնը նոր, այսինքն պրոլետարական դեմոկրատիայի բմբանման գործում, երեւում է մանաւանդ հետևեալից: 1919 թ. փետրվարի 10-ին Բրանտինդը փակել է Բեռնում Դեղին ինսերնացիս-նալի միջազգային համաժողովը: 1919 թ. փետրվարի 11-ին Բեռլինում, նրա մասնակցողների „Die Freiheit“ լրադրում տպագրած է ռանկախ սոցիալ դեմոկրատներից կոչը պրոլետարիատին: Այդ կոչի մէջ խոստովանուում է Շայդեմանի կառավարութեան բուրժուական բնոլթը, նրան մեղադրում են Träger und Schützer der Revolution, յեղափոխութեան շարժիչ ու պաշտպան, կոչւած Խորհրդները վերացնելու ցանկութեան մէջ, և առաջարկ է արւում օրինական ճանաչում Խորհրդները, պետական իրաւունքներ տալ նրանց, իրաւունք տալ նրանց բեկանալու Սահմանադիր Ժողովի վճիռները՝ գործերը համաժողովրդական քւէարկութեան յանձնելով:



էին գեմոկրատիան և չեին ըմբռնել նրա բուրժուական քնոյթը։ Խորհրդների սիստեմը, ո յօինքն պրոլետարիատի զիկտատուրոն Սահմանադիր Փողովի, ալսինքն բուրժուազիայի դիկտոտուրայի հետ միացնելու ծիծաղելի փորձը վերջնապէս մերկացնում է և դեղին սոցիալիստների և սոցիալ դեմոկրատների մտքի խեղճութիւնը, և՛ նրանց մանր բուրժուական քաղաքական ռէկացիան, և՛ նրանց վախկու զիշումները նոր, պրոլետարական գեմոկրատիայի ուժի անդուսպահման նկատմամբ։

23) Դատապարտելով բոլշեկոմը, Բեռնում Դեղին հստերնացիոնալի մեծամասնութիւնը, որ երկիւղ կրելով բանւորական մասսաներից վճռականութիւն չունեցաւ ձևականորէն համապատասխան ռեզլիւցիա քէկարկել, դասակարգալին տեսակետից ուղիղ է վարւել։ Հենց այդ մեծամասնութիւնն էլ լիովին համերաշխ է ոռւս մենշևիկների ու սոցիեղափոխականների և Գերմանիայի Շարդեմանների հետ։ Ռուս մենշևիկներն ու սոց. յեղափոխականները, դանողատելով բոլշեկներից կրած հալոծանքներից, փորձում են թագցնել այն փաստը, որ այդ հալոծանքները տեղի են ունեցել քաղաքացիական պատերազմում բուրժուաների կողքին—ընդդէմ պրոլետարիատի՝ մենշևիկների և սոց. յեղափոխականների մասնակցութեան շնորհիւ։ Ճիշտ նույնպէս Շարդեմանները Գերմանիայում ապացուցել են իրանց նոյնօրինակ մասնակցութիւնը քաղաքացիական պատերազմին՝ բուրժուազիայի կողքին—ընդդէմ բանւորների։

Ուստի և լիովին ընական է, որ Բեռնի Դեղին հստերնացիոնալին մասնակցողների մեծամասնութիւնն արտայատւեց յօդուտ բոլշեկների դատապարտութեան։ Դրանում ոչ թէ «զուտ գեմոկրատիայի» պաշապանութիւնն արտայալուեց, այն մարդկանց ինքնապաշտպանութիւնը, որոնք զիտեն և զգում են, որ քաղաքացիական պատերազմում կողմնակից են բուրժուազիային՝ ընդդէմ պրոլետարիատի։

Ահա թէ ի՞նչու, գասակարգային տեսակետից, չի կարելի աւղիղ չհամարել Դեղին հստերնացիոնալի մեծամասնութեան սրոշումը։ Պրոլետարիատը պէտք է, առանց նշմարտութիւնից վախենալու, ուղիղ հայեցք ձգի նրան և սրանից իր քաղաքական եղրակացութիւնները հանի։



«Ազգային գրադարան



NL0172636

